ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_22_» _ՆՈՅԵՄԲԵՐԻ_ 2022 թվական, N 25-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կարեն Գառնիկի Ազարյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

   (Զեկ. Ա. Թամազյան)

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող Մ-6 միջպետական ավտոճանապարհի բարելավման ծրագրի

շրջանակներում 261 միավոր հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն հավանություն տալու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Որոշումն ընդունվեց.

Կողմ - 26
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ՔԱՂՎԱԾՔ

Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ին կայացած հերթական նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կարեն Գառնիկի Ազարյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ալավերդի համայնքի ավագանու կանոնակարգի 148-րդ կետի 6-րդ մասի համաձայն, հիմք ընդունելով Կարեն Գառնիկի Ազարյանի դիմումը՝ համայնքի ավագանին արձանագրում է.

Վաղաժամկետ դադարեցվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու անդամ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Կարեն Գառնիկի Ազարյանի լիազորությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Ջորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվական, N 26-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.1 Համայնքի բյուջեի եկամտային մասում նախատեսել կապիտալ տրանսֆերտների գծով եկամուտներ՝ նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից 43430.4 հազ. դրամ (h/h 900265004136).
   1.2 Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ բնագավառի ծախսերն ավելացնել 43430.4 հազ. դրամով՝ բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) (բաժին 06, խումբ 6, դաս 1, ծրագիր 51, h/h 900262121222, հոդված 5113):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց.

Կողմ - 26
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվական, N 27-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11, 13 հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Ալավերդի համայնքի տարածքում 2023 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի տարածքում բոլոր տուրքերի և վճարների համար սահմանվում են միասնական դրույքաչափեր:
3. Տվյալ տարվա համար հաստատված տեղական տուրքի և վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:
4. Տեղական տուրքերը և վճարները վճարվում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց.

Կողմ - 26
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 27-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ալավերդի համայնքում 2023 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Տեղական տուրքեր.

1.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

բա) 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ.

բբ) 500-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ.

բգ) 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ.

բդ) 3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 դրամ:

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3 000 դրամ.

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են

նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

1.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5 000 դրամ:

1.4 Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող յուրաքանչյուր լցավորման կայանում օրացուցային տարվա համար՝

1.4.1 հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ 200 000 դրամ.

1.4.2 սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ 200 000 դրամ.

1.4.3 հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ 200 000 դրամ:

1.5 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող յուրաքանչյուր լցավորման կայանում օրացուցային տարվա համար՝

1.5.1 հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ 100 000 դրամ.

1.5.2 սեղմված բնական գազի վաճառքի վաճառքի թույլտվության համար՝ 100 000 դրամ.

1.5.3 հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ 100 000 դրամ:

1.6 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի, մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ 60 000 դրամ:

1.7 Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի, մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսվարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝ 20 000 դրամ.

1.8 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 դրամ:

1.9 Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային

արտադրատեսակների կամ ծխատոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 16 000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 70 000 դրամ:

բ) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխատոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14 000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35 000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 60 000 դրամ:

1.10 Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանմված բացօթյա առևտուր կազմակերպելու

թույլտվության համար սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

1.11 Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 80 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների համար՝ 500 000 դրամ.

ե) շահումներով խաղերի համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի համար՝ 100 000 դրամ:

1.12 Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան) տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա) հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ:

բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

1.13 Քաղաքային բնակավայրերում տնային կենդանիներ պահելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանել 5 000 դրամ:

1.14 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և

պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 /երկու հազար/ դրամ.

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% -ի չափով.

զ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

1.15 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները /զինանշանը, անվանումը/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 100 000 դրամ:

1.16 Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել 10 000 դրամ:

1.17 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 500 000 դրամ:

1.18 Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 դրամ:

1.19 Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 50 000 դրամ:

1.20 Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար սահմանել տեղական տուրք՝

ա. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների /բացառությամբ հեստապարային ակումբների/ համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազար ՀՀ դրամ:

1.21 Համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տնյալ օնյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային /մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ/ և ձմեռային /նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ/ սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար 10 /տասը/ հազար դրամ մեկ քառակուսի մետրի համար:

Սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ 3-րդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, բացառությամբ 1.1 - 1.3-րդ կետերի:

1.1 - 1.3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերում՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերում՝ 1.0-3.0 գործակիցների կիրառմամբ:

2. Տեղական վճարներ.

2.1 Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ:

2.2 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ:

2.3 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 15 000 դրամ.

2.4 Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ.

2.5 Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար յուրաքանչյուր մասնակցի համար սահմանել 15 000 դրամ.

2.6 Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ.

2.7 Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝

- Ալավերդի քաղաքում կենցաղային աղբի տեղափոխման վճար յուրաքանչյուր անձի համար ամսական 150 դրամ, Ալավերդի համայնքի /բացառությամբ Ալավերդի քաղաքի/ բնակավայրերում յուրաքանչյուր անձի համար ամսական 100 դրամ.

- ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի 1 քմ մակերեսի համար 20 դրամ:

2.8 Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել.

- առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով 1 քմ մակերեսի համար 100 դրամ.
- հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար 50 դրամ.
- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ մակերեսի համար 15 դրամ.
- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1 քմ մակերեսի համար 15 դրամ.
- շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել առավել բարձր դրույքաչափով.
- ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ 1 մ^3 աղբի համար 3 000 դրամ կամ

բ/ ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար 10 000 դրամ:

2.9 Կենտրոնացված ջեռուցման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:

2.10 Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի, ջրի վճար սահմանել 1 մ^3 համար 171 դրամ.

- Շամլուղ բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել, առանց կոյուղու սպասարկման, 1 մ^3 համար 100 դրամ, կոյուղու սպասարկումով՝ 130 դրամ.
- Շնող բնակավայրի խմելու ջրի վճար սահմանել՝ յուրաքանչյուր տնտեսության համար ամսական 500 դրամ:

2.11 Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի ոռոգման ջրի վճար սահմանել.

- 0 - 500 քմ մակերես ունեցող հողամասի համար 300 դրամ.

- 500 - 1000 քմ մակերես ունեցող հողամասի համար 500 դրամ.
- 1000-2000 քմ մակերես ունեցող հողամասի համար 1 000 դրամ.
- 2000-3000 քմ մակերես ունեցող հողամասի համար 1 500 դրամ.
- 3000-5000 քմ մակերես ունեցող հողամասի համար 2 000 դրամ.
- 5000-10000 քմ մակերես ունեցող հողամասի համար 5 000 դրամ.
- 10000 և ավելի քմ մակերես ունեցող հողամասի համար 10 000 դրամ:

2.12 Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:

2.13 Ալավերդի համայնքի վարչական տարածքում համայնքային ենթակայության մանկապարտեզներում ծնողական վճար մեկ ամսվա համար սահմանել 3 500 դրամ.
- միակողմանի ծնողազուրկ երեխաների, մեկ ծնողի երկրորդ երեխայի հաճախելու դեպքում մեկ ամսվա համար 2 000 դրամ.
- երկկողմանի ծնողազուրկ երեխաների, զոհված կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների երեխաների, ինչպես նաև մեկ ծնողի երեք և ավելի երեխայի հաճախման դեպքում մեկ ամսվա համար զրո դրամ:

2.14 Ալավերդի համայնքի վարչական տարածքում համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների՝ երաժշտական և արվեստի դպրոցների ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել՝

ա/ դաշնամուրային բաժնի համար՝ 3 500 դրամ.

բ/ լարային, փողային և վոկալ բաժինների համար՝ 3 000 դրամ.

գ/ ժողգործիքների բաժնի համար ՝ 2 000 դրամ.

դ/ «II գործիք» ոչ պարտադիր ֆակուլտատիվ առարկայի ուսուցման համար՝ 500 դրամ.

- գեղարվեստի դպրոցի ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ.
- ըմբշամարտի դպրոցում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ.
- մանկապատանեկան մարզադպրոցում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 1 000 դրամ:
- միակողմանի ծնողազուրկ երեխաների, մեկ ծնողի երկրորդ երեխայի հաճախելու դեպքում մեկ ամսվա համար՝

  ա/ դաշնամուրային բաժնի համար՝ 2 000 դրամ.

  բ/ լարային, փողային և վոկալ բաժինների համար՝ 1 500 դրամ.

  գ/ ժողգործիքների բաժնի համար ՝ 1 000 դրամ.

  դ/ «II գործիք» ոչ պարտադիր ֆակուլտատիվ առարկայի ուսուցման համար՝ 250 դրամ.
- գեղարվեստի դպրոցի ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 500 դրամ.
- ըմբշամարտի դպրոցում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 500 դրամ.
- մանկապատանեկան մարզադպրոցում ուսման վճար մեկ ամսվա համար սահմանել 500 դրամ:
- երկկողմանի ծնողազուրկ երեխաների, զոհված կամ հաշմանդամ դարձած ազատամարտիկների երեխաների, ինչպես նաև մեկ ծնողի երեք և ավելի երեխայի հաճախման դեպքում մեկ ամսվա համար զրո դրամ:

2.15 Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ:

2.16 Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց, փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ:

2.17 Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատում է համայնքի ավագանին՝ մեկ ավտոմեքենայի համար 200 դրամ:

2.18 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար վճար սահմանել՝ մեկ փաստաթղթի համար 1 000 դրամ:

2.19 Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

2.19.1 Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ 500 դրամ:

2.19.2 Ծննդօգնության համար.

ա/ թեթև միջամտության համար՝ 1000 դրամ.

բ/ ծանր միջամտության համար՝ 5000 դրամ:

2.19.3 Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների).

ա/ մանր կենդանու համար՝ 100 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 200 դրամ:

2.19.4 Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարելու համար՝ 200 դրամ:

2.19.5 Ախտահանության 1 քմ-ի համար՝ 200 դրամ:

2.19.6 Միջատազերծման (դեզինսեկցիա) 1 քմ-ի համար՝ 100 դրամ:

2.19.7 Կրծողների ոչնչացման (դեռատիզացիա) 1քմ-ի համար՝ 200 դրամ:

2.19.8 Արհեստական սերմնավորման համար՝ 5000 դրամ:

2.19.9 Կենդանու հերձման համար.

ա/ մանր կենդանու համար՝ 1000 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 3000 դրամ:

2.19.10 Կենդանու բուժման՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից, յուրաքանչյուր այցելության համար՝ 1000 դրամ:

2.19.11 Կենդանու նախասպանդային զննման համար՝ կախված կենդանու տեսակից.

ա/ մանր կենդանու համար՝ 1000 դրամ.

բ/ խոշոր կենդանու համար՝ 2000 դրամ:

2.20 Համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ:

2.21 Համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:

2.22 Համայնքում իրականացվող որոշ գյուղատնտեսական աշխատանքներ (վար, երեք խոփանոց գութանով, խոտհունձ տրակտորային հնձիչով, խոտի հավաքում տրակտորային հավաքիչով և խոտի հակավորում) իրականացնելու համար տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

2.22.1 Վար 1 հա-ի հաշվով՝ 30.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 40.0 հազար դրամ.

2.22.2 Խոպան հողի /վար/ 1 հա-ի հաշվով՝ 35.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 45.0 հազար դրամ.

2.22.3 Խոտհունձ տրակտորային հնձիչով՝ 20.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 25.0 հազար դրամ.

2.22.4 Խոտի հավաքում տրակտորային հավաքիչով 1 հա-ի հաշվով՝ 10.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 15.0 հազար դրամ.

2.22.5 Փխրեցում, հարթեցում 1 հա-ի հաշվով՝ 18.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 23.0 հազար դրամ.

2.22.6 Ցանքս 1 հա-ի հաշվով՝ 15.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 20.0 հազար դրամ.

2.22.7 Կուլտիվացիա 1 հա-ի հաշվով՝ 15.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 20.0 հազար դրամ.

2.22.8 Սրսկիչ /առանց բուժանյութի/ 1 հա-ի հաշվով՝ 10.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 15.0 հազար դրամ, բուժանյութով՝ հավելացված բուժանյութի արժեքը.

2.22.9 Խոտի մամլում 1 հակի հաշվով՝ 150 դրամ, համայնքից դուրս՝ 170 դրամ.

2.22.10 Հորատող սարքի 1 հատ փոսի հաշվով՝ 150 դրամ, համայնքից դուրս՝ 180 դրամ.

2.18.11 Խոտհունձ այգու ներսում 1 հա-ի հաշվով՝ 40.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 50.0 հազար դրամ.

2.18.12 Միջշարային մշակության կուլտիվատոր 1 հա-ի հաշվով՝ 15.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 18.0 հազար դրամ.

2.18.13 Հացահատիկային կոմբայն 1 հա-ի հաշվով՝ 26.0 հազար դրամ, համայնքից դուրս՝ 30.0 հազար դրամ:

Ծառայություն մատուցելու /կամ վարձակալությամբ տրամադրելու/ դեպքում տրակտորիստին տրամադրել իր հավաքագրված գումարի 25%-ը, սրսկիչի դեպքում՝ 30%-ը:

2.23 Ալավերդու համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող տեխնիկաներով ծառայություններ մատուցելու համար տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

2.23.1 Բեռնատար ինքնաթափ մեքենա, թափքի տարողությունը 10 տոննա, միակողմանի 1 կիլոմետրը՝ 1500 դրամ, երկկողմանի՝ 750 դրամ, 1 ժամ կայանելու համար՝ 500 դրամ, օրավարձով՝ 1 ժամը 20.0 հազար դրամ.

2.23.2 Էքսկավատոր, մինչև 1 ժամը՝ 13000 դրամ, 1 ժամը և 1 ժամից հետո հաշվարկը կատարել 1 ժամի համար 15000 դրամ, համայնքից դուրս՝ 20.0 հազար դրամ.

- հիմնարկներին և կազմակերպություններին տրամադրելու համար սահմանել վճար՝ յուրաքանչյուր ժամի համար 20000 դրամ, իսկ օրավարձով տրամադրելու դեպքում՝ 8 ժամ և ավելիի դեպքում, յուրաքանչյուր ժամի համար 15000 դրամ.

2.23.3 Ավտոգրեյդեր, 1 ժամի համար՝ 15000 դրամ, համայնքից դուրս՝ 20.0 հազար դրամ.

- հիմնարկներին և կազմակերպություններին տրամադրելու համար սահմանել վճար 1 ժամից 8 ժամ՝ յուրաքանչյուր ժամի համար 20000 դրամ, 8 ժամի ավելի յուրաքանչյուր ժամի համար՝ 15000 դրամ.

2.23.4 Միկրոավտոբուս, 1 կիլոմետրի արժեքը միակողմանի՝ 360 դրամ, երկկողմանի՝ 180 դրամ:

Ավտոմեքենայի ծառայության վճարովի մատուցման պայմանագիր կնքելու դեպքում, ծառայություն մատուցելու համար՝ 1 կմ-ը 35 դրամ:

Համայնքի /համայնքապետարանի/ կարիքների և միջոցառումների համար ցանկացած տրանսպորտային միջոցն անվճար է:

Առաջնահերթությունը տալ համայնքի կարիքների համար, ցանկացած տրանսպորտի դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱՄԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվական, N 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ Մ-6 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 261 ՄԻԱՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 09.08.2007թ. N 1032-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն և 1920-Ն որոշումներով սահմանված կարգով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հավանություն տալ Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող Մ-6 միջպետական «Վանաձոր-Բագրատաշեն» ավտոճանապարհի բարելավման ծրագրի շրջանակներում 261 միավոր հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, տրանսպորտի գործառնական նշանակության հողերի:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկությունների վերաբերյալ հողաշինարարական գործերը ներկայացնել լիազոր մարմնի միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Որոշումն ընդունվեց.

Կողմ - 26
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

5) առաջարկվող նպատակային և գործառնական նշանակությունները՝

Հ/հ	Համայնք	Կադաստրային ծածկագիրը	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը
1	ք. Ալավերդի	06-002-0001-0077	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
2	ք. Ալավերդի	06-002-0001-0082	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
3	ք. Ալավերդի	06-002-0001-0086	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
4	ք. Ալավերդի	06-002-0001-0079	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
5	ք. Ալավերդի	06-002-0001-0078	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
6	ք. Ալավերդի	06-002-0001-0080	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Տրանսպորտի
